ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» սեպտեմբերի 2011թ. **N------ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի ի Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու հ.162-Ն որոշման 3–րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Թույլատրել «Երևան քաղաքի պատմության թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն իրեն ամրացված՝ Երևան համայնքի սեփականություն համարվող գույքի կազմից գիտական ֆոնդերում ընդգրկված 1915-1916 թվականներին բռնագաղթերի հետևանքով Էջմիածնում հաստատված հայ գաղթականության վիճակը ներկայացնող 19 հատ լուսանկարները մեկ տարի ժամկետով տրամադրել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ ցուցադրություններում զետեղելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԳՈՒՅՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենը 27.08.2011թ. հ. 0-88 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ «Երևան քաղաքի պատմության թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված ֆոնդերում ընդգրկված 1915-16թթ. բռնագաղթերի հետևանքով Էջմիածնում հաստատված հայ գաղթականության վիճակը ներկայացնող 19 հատ լուսանկարները մեկ տարի ժամկետով տրամադրելու «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ ժամանակավոր ցուցադրություններում զետեղելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԳՈՒՅՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի ենթակայության «Երևան քաղաքի պատմության թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքի գիտական ֆոնդերում ընդգրկված 1915-16թթ. բռնագաղթերի հետևանքով Էջմիածնում հաստատված հայ գաղթականության վիճակը ներկայացնող 19 հատ լուսանկարները մեկ տարի ժամկետով «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԳՈՒՅՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի ենթակայության «Երևան քաղաքի պատմության թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքի գիտական ֆոնդերում ընդգրկված 1915-16թթ. բռնագաղթերի հետևանքով Էջմիածնում հաստատված հայ գաղթականության վիճակը ներկայացնող 19 հատ լուսանկարները մեկ տարի ժամկետով «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ